



# ԱՆՏՀԱՅՈՒՆԵՐԻ

Հասցե: Երևան, Մարտիրոսի փողոցի 10-րդ համարի թիվ 1  
Հեռ. 4922211-4922212, 4922213-4922214, 4922215-4922216  
Էլ. փոստ: [info@nl.am](mailto:info@nl.am)


## Միսս ՉեղեցկուԹյուն 2005

### Հատուկ թողարկում՝ նվիրված հաշմանդամ կանանց իրավունքներին

«Երկրի լիարժեք զարգացման, ինչպես նաև ամբողջ աշխարհում բարեկեցություն և խաղաղություն ապահովելու համար անհրաժեշտ է տղամարդկանց հետ հավասար հիմունքներով կանանց առավելագույն մասնակցությունը կյանքի բոլոր ոլորտներում»  
(Քաղվածք Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայից)  
Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Կոնվենցիան 1993 թվականին:

### Այս շաբաթում՝

- 2 «Առանձ բարոհայն իտլըն ռգրեսիս է...»  
Հարցազրույց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանի հետ
- 3 ԽճԱԿԱՐ  
Անշահախնդիր օգնություն
- 4 Հարց և պատասխան  
Արուսյակ Ղևոնդյանի ստեղծագործություններից
- 5 Հաջողության ՊԱՏՈՒԹՅՈՒՆ  
Շարադրում է Ջեմի Բոլլինգը (Շվեդիա)
- 7 Invisible People (brief summary in English)



Վրահանդար՝ ՉեղեցկուԹյուն



«ԱՌԱՆՑ ԲԱՐՈՒԹՅԱՆ ԽԵՆՔԸ ԱԳՐԵՍԻԱ Է...»

Հարցազրույց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանի հետ

- Որպես Մարդու իրավունքների պաշտպան և ուղղակի որպես կին, ինչպե՞ս եք գնահատում կնոջ դերը ժամանակակից հայ իրականության մեջ:

- Ես համարում եմ, որ կնոջ դերը ժամանակակից իրականության մեջ շատ հակասական է: Գոյություն ունի որոշակի ասիմետրիա կնոջ կրթական ցեմզի, նրա հասարակական ակտիվության, հայ ընտանիքում նրա ավանդական դերի և հասարակության մեջ զբաղեցրած իրական դիրքի միջև: Այս ասիմետրիան գուցե շուտով կդառնա ևս մեկ այսպես կոչված «հայկական պարադոքս»: Ես հատկապես ուզում եմ պարզաբանել, որ պարադոքսներ այստեղ չկան, ուղղակի գոյություն ունի արմատական հիմնախնդիրների որոշակի թերհասկացողություն կամ անտեսում: Այսինքն, կնոջ դիրքը մեր հասարակության մեջ այսօր չի համապատասխանում իր ներուժին, իրական հնարավորություններին:

- Ինչպիսի՞ն, ըստ Ձեզ, պետք է լինի կնոջ դերը ժամանակակից քաղաքակիրթ հասարակության մեջ:

- Այս հարցում իմ հանգուցային բառը հարմոնիան է՝ ներդաշնակություն: Ես շատ վաղուց դեմ եմ առհասարակ «հավասարություն» բառին, որպես կին-տղամարդ փոխհարաբերության բնորոշում կամ կին-տղամարդ սոցիալական տարաբաժանում նշանակող բառ: Միշտ և ամենուր աշխատել եմ փառաբանել կնոջ և տղամարդու հասարակական դերի, պարտականությունների, հնարավորությունների ներդաշնակ համադրության, փոխներգործության, միմյանց լրացնելու գաղափարը: Ես այդ ուղղությամբ թեև համեստ, բայց նպատակասլաց քայլեր եմ անում, ձգտելով ներդաշնակության բոլոր մակարդակների վրա՝ թե ընտանիքում, թե հասարակության մեջ, թե երկրի կառավարման ոլորտում: Ինձ համար այժմ համեմատաբար հեշտ է այդ մասին խոսել, քանի որ Արևմուտքում «հավասար

իրավունքներ» արտահայտության փոխարեն վաղուց կիրառվում է «հավասար հնարավորություններ»-ը: Այս հասկացություններն իրար չեն հակասում, այլ լրացնում ու ավելի լայն իմաստ են հաղորդում միմյանց: Հավասար իրավունքներ ունենալը դեռ չի ապահովում այդ իրավունքների իրականացումը: Հավասար իրավունքների իրականացման հնարավորության ստեղծումը պետք է դառնա կառավարական վերնախավի խնդիրը. սա այսօր Հայաստանում առաջնային հիմնախնդիրներից մեկն է: Մենք կարող ենք համեմատություն անցկացնել մոտ օրերս «Ունիսոն» ՀԿ-ի կողմից անցկացրած կլոր սեղանի ժամանակ արժարժվող հարցի հետ: Սայլակավոր հաշմանդամները կրթություն ստանալու և հասարակական վայրեր հաճախելու հավասար իրավունքներ ունեն, սակայն այդ իրավունքներից օգտվելու համար հարկավոր է լրացուցիչ հնարավորություններ ստեղծել՝ տվյալ դեպքում շինությունների ֆիզիկական մատչելիության ապահովման ձևով:

- Որպեսզի հաշմանդամություն ունեցող կինը գրավի հասարակության մեջ իր ուրույն տեղը, նրան անհրաժեշտ է ստանալ համապատասխան կրթություն և ընդունվել աշխատանքի: Ինչպե՞ս կարելի է իրականացնել այդ անհրաժեշտությունը մեզանում:


- Եկեք պայմանավորվենք այսուհետ գործածել հետևյալ հասկացությունները՝ ներդաշնակություն հասարակության փոխարեն և բնակչության անհրաժեշտության փոխարեն: Այստեղ խոսքը վերաբերում է մարդու բնական վիճակին, որովհետև յուրաքանչյուր անձ ծնվում է հասարակության մեջ իր տեղը գրավելու բնականոն նպատակով: Ես ուսումնասիրել եմ այս ուղղությամբ արտերկրի ձեռք բերած փորձն և կարող եմ ասել, որ մեծ մասամբ հաշմանդամների աշխատանքի տեղավորման հարցը կարգավորվում է օրենսդրությամբ՝ հիմնականում կապված տնտեսական լծակների, այդ թվում հարկային դաշտի հետ: Մեր երկրում հաճախ պետական մարմինները ձեռնպահ դիրք են ընդունում այս հարցում՝ պատճառաբանելով, որ այժմ գործող հիմնարկությունները և ֆիրմաները մեծ մասամբ մասնավոր սեփականություն են: Սակայն թույլ տվեք հիշեցնել, որ մենք առաջին պետությունը չենք, որ որդեգրել ենք մասնավոր սեփականության ուղին, նույնիսկ վերջիններից մեկն ենք: Այսպիսով, առաջին հերթին հարկավոր է մշակել համապատասխան օրենսդրական միջոցներ, որոնցով մի կողմից կնախատեսվեն որոշ հարկային արտոնություններ այն ձեռնարկատերերի համար, որոնք հաշմանդամների համար աշխատա-

տեղեր են հատկացնում, մյուս կողմից կսահմանվեն պատժամիջոցներ դրանից խուսափելու դեպքերում:

- Հնարավոր է, արդյոք, որ հաշմանդամություն ունեցող կինը երբևէ զբաղեցնի բարձրաստիճան պետական պաշտոն:

- Ես համարում եմ, որ հնարավոր է: Ասեմ ավելին՝ ես պարտավոր եմ այդպես համարել, և ոչ այն պատճառով, որ Մարդու իրավունքների պաշտպան եմ, այլ հատուկ մոտեցում ունեմ այդ հարցին: Ինձ համար բացարձակ անընդունելի է, երբ մարդիկ կամ հասարակությունը որևէ անձի աշխատանքային, հասարակական կամ մտավոր գնահատականը որոշում են լրիվ այլ, տվյալ նպատակին չծառայող չափանիշներով, օրինակ, ֆիզիկական սահմանափակման փաստով: Ինձ համար շատ հաճելի էր լսել այն երիտասարդի պատմությունը, որ հնչեց վերոնշյալ կլոր սեղանի ժամանակ: Շինությունների մատչելիության մոնիտորինգի ժամանակ մի քանի սայլակավոր մոնիտոր-հետազոտողներ այնքան աշխույժ էին աշխատում, որ ոմանք նույնիսկ կասկած հայտնեցին նրանց հաշմանդամ լինելու վերաբերյալ:

Իմ գրապահարանում Դուք տեսնում եք Սլավոնական Համալսարանի դասախոս Մարիամ Մարգարյանի գիրքը, նվիրված հասարակական մտքի զարգացման հարցերին, որը մեծ ներդրում է ժամանակակից հասարակական շարժման զարգացման մեջ: Մարիամ Մարգարյանը սայլակավոր հաշմանդամ է, բայց ոչ մի րոպե նա ետ չի մնում իր առջև դրված նպատակներից: Այստեղ ես կարևորում եմ նաև նրա աշխատակիցների, ինչպես նաև ռեկտորի վերաբերմունքը և աջակցությունը: Այսպիսով կարելի է հուսալ, որ աստիճանաբար ձևավորվում է համապատասխան միջավայր, որը ճիշտ, այսինքն բնական վերաբերմունք է



ցուցաբերում խոցելի խմբերի նկատմամբ: Գուցե շուտով նման հարցերն արդեն կկորցնեն իրենց հրատապությունը: Համենայնդեպս, արդեն նկատվում է լուրջ տեղաշարժ:

- Ինչ եք կարծում, ո՞վ է այսօր ավելի խոցելի, հաշմանդամ կանայք թե հաշմանդամ տղամարդիկ:

- Շատ հետաքրքիր հարց է, երբեք չէի մտածել այդ մասին: Մեր առաջին երկու հարցերից ելնելով կարելի է ասել, որ կինն ի սկզբանե խոցված է հավասար իրավունքների դեպքում հավասար հնարավորություններ չունենալու պատճառով: Մյուս կողմից, հայ իրականության մեջ տղամարդու կերպարը միշտ եղել է հզոր՝ նա ընտանիքի գլուխն է, հիմնական ֆինանսական դաշտն ապահովող անձը, խնամակալը և այլն... Եվ այս դեպքում ֆիզիկական սահմանափակումներով տղամարդը, կորցնելով աշխատանքային ասպարեզում իր մրցունակությունը, դառնում է առաջին հերթին բարոյապես առավել խոցված: Փաստորեն, եթե տղամարդու խոցելիությունն ավելի շուտ ունի հոգեբանական նշանակություն, ապա կնոջ խոցելիությունը շատ ավելի իրական է և կենսազորություն մեջ շոշափելի: Բացի այն, որ հասարակությունը

եմ ոչ նրա համար, որ հաշմանդամ էր, այլ ընդհակառակը՝ ապացուցելու, որ գեղեցիկը դուրս է պայմանականություններից:

- Ձեր ուղերձը հաշմանդամ կանանց:  
- Դիմում եմ բոլոր կանանց՝ եղեք միշտ գեղեցիկ: Կնոջ համար դա ամենակարևոր բաղադրիչն է: Գեղեցկության զգացումը միշտ պետք է տիրի ձեր հոգում: Անշուշտ, հաշմանդամ կնոջ առօրյայում միշտ առկա է ինքնահաղթահարումը բազմաթիվ հարցերում: Ես ցանկանում եմ, որ այդ ինքնահաղթահարումը ձեզ համար չլինի ծանր պարտականություն, այլ դառնա բնական առաքելություն: Ահա այս կերպով պետք է իրականանա կնոջ դերը հասարակության մեջ՝ լինել կին:

Եվ վերջինը՝ ուշադրություն մի՛ դարձրեք չհասկացող (նույնիսկ կասե՛ի՝ տհաս, թերզարգացած) մարդկանց սխալ հայացքներին և աչքերի արտահայտությանը: Եղեք նրանցից բարձր, չէ՞ որ հասարակությունը ոչ թե բաղկացած է անիմաստ ագրեսիվություն ցուցաբերող մարդկանցից, այլ հիմնված է դրական իմպուլսների վրա, որոնք արդյունք են խելացի մարդկանց մտախոհացումների: Այո, ես ինտելեկտ եմ համարում բարի միտքը կամ խելամիտ



Գոհար Ստեփանյան

ԱՆՇԱՀԱՄԻՆԴԻՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Երբեմն թվում է, թե անշահախնդրությունը մեզանում քիչ-քիչ վերանում է: Սակայն, դեռ կան մարդիկ, ովքեր պատրաստ են ձեռք մեկնել օգնության կարիք ունեցող մարդկանց. հատկապես, նրանց, ովքեր ճակատագրի բերումով մնացել էին անօթևան՝ հաշմանդամ երեխայի հետ միասին:

Խոսքս տասնամյա Թագուհու և իր ընտանիքի մասին է: Աղջիկը ծնվել է մանկական ուղեղային կաթվածով: Ծնողների հոգատարության և բժիշկների օգնության շնորհիվ հաջողվեց որոշակիորեն բարելավել նրա առողջական վիճակը: Սակայն, կային նաև այլ խնդիրներ:

Հինգ անձից բաղկացած Թագուհու ընտանիքը բնակվում էր այն կացարանում, որը ժամանակին նրանց տրամադրել էր Էրեբունի համայնքի համատիրության նախագահ՝ Սերգեյ Կրամչյանը: Քաջատեղյակ լինելով Թագուհու և իր ընտանիքի կարգավիճակին, համատիրության նախագահը համապատասխան մարմիններից պահանջեց հատուկ ուշադրություն դարձնել այդ ընտանիքին: Եվ ահա Նուբարաշենի թաղապետ Ռոբերտ Ասատրյանն օրինականացրեց այդ մեկ սենյականոց բնակարանը՝ ճանաչելով այն որպես Թագուհու ընտանիքի սեփականություն: Այժմ փոքրիկ Թագուհին ապրում է իր սեփական բնակարանում, որի կապակցությամբ մենք նրան ջերմորեն շնորհավորում ենք՝ միաժամանակ հույս հայտնելով, որ նման հոգատարություն դեպի հաշմանդամների կարիքները կցուցաբերեն նաև այլ պետական այրեր:



բավական հնարավորություն չի ընձեռել կանանց, այստեղ կարևոր է նաև գեղագիտական գործոնը՝ կինը միշտ ցանկանում է լինել գեղեցիկ, դրանում է նրա առաքելությունը: Այսպիսով, կանանց հարցում ամենինչ ավելի բարդ է: Չնայած դրան, այս հարցում էլ են նկատվում զգալի տեղաշարժեր: Երբ տեսա Միսս Գեղեցկություն – 2005 հաշմանդամ կանանց ֆոտոմրցույթի հաղթող գեղեցկուհուն, ուղղակի ցնցվեցի՝ ավելի գեղեցիկ անձնավորություն ես չեմ հանդիպել նույնիսկ մեր Միսս Հայաստանների մեջ: Եվ սա ասում

բարությունը: Բարությունից զուրկ խելքն ինձ համար ագրեսիա է, այլ ոչ ինտելեկտ՝ միայն հոգու բարության հետ ներդաշնակության մեջ է միտքը դառնում ինտելեկտ:

Սիրելի՛ կանայք: Միշտ եղեք խելացի և բարեհոգի՝ այդ ուժը ձեզ կօգնի բարձր մնալ բոլոր տեսակի սխալ մոտեցումներից: Հիշե՛ք, որ կնոջ առաքելությունը վեր է ֆիզիկական պայմանականություններից:

Չրուցե՛ք Լուսինե Մելքունյանը

## ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

Օրենսդրությունը նախատեսում է, արդյոք, տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման հատուկ կանոններ բազմազավակ մայրերի և հաշմանդամ երեխաներ ունեցող մայրերի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի, չորս և ավելի երեխա ծնած և նրանց մինչև ութ տարեկանը խնամած մայրերը, ինչպես նաև մինչև 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ճանաչված երեխա խնամած մայրերը՝ 58 տարին լրանալու և առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում ունեն արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

Կենսաթոշակ նշանակելիս կնոջ ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառվում է, արդյոք, հաշմանդամ կամ փոքրահասակ երեխայի խնամքի ժամանակահատվածը:

Կենսաթոշակ նշանակելիս կնոջ աշխատանքային ընդհանուր ստաժում հաշվառվում է ինչպես մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամ երեխային խնամելու, այնպես էլ չաշխատող մոր կողմից՝ յուրաքանչյուր երեխային մինչև 3 տարին լրանալը խնամելու ժամանակաշրջանը: Սակայն աշխատանքային ստաժում հաշվառվող՝ մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամ երեխայի խնամքի ժամանակաշրջանը չի կարող գերազանցել 10 տարին: Մինչև 3 տարեկան երեխաների խնամքի ընդհանուր ժամանակաշրջանը՝ անկախ երեխաների թվից, չի կարող գերազանցել 9 տարին:

(քաղվածք «Կանանց և երեխաների իրավունքների մասին» գրքից, հեղինակ՝ Լ.Հակոբյան, Երևան, 2002)

### Դավիթ Բաբայան



### ՄԻՍՍ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ - 2005

Հաշմանդամ կանանց գեղեցկության 2-րդ հանրապետական ֆոտոմրցույթը Աշխարհին իր ողջ հմայքով և գեղեց-



Ժյուրիի անդամ Ֆորշը շնորհավորում է մրցույթի հաղթողներին

կությանը հաճախ ստիպում է մարդկանց մտածել, թե որքան հարաբերական և անսահմանափակ կարող է լինել ԳԵՂԵՑԻԿԸ: Առավելապես, կանանց գեղեցկության մասին խոսելիս ականայից ցանկություն է առաջանում հիշելու բազմաթիվ մեծ մտածողների ու պոետների, որոնք միշտ համեմատել են կնոջ գեղեցկությունը աշխարհի ամեն սքանչելիի հետ:

Հետևելով այս գաղափարին «Ունիտոն» հասարակական կազմակերպությունը ս. թ. մարտ-ապրիլ ամիսներին հաշմանդամություն ունեցող կանանց համար անցկացրեց Երկրորդ հանրապետական գեղեցկության ֆոտոմրցույթը:

Մրցույթին մասնակցելու նպատակով 16-40 տարեկան 40 կանայք և աղջիկներ Հայաստանի տարբեր շրջաններից (Երևանից, Աբովյանից, Սպիտակից, Մարտունուց, Չարենցա-

վանից, Կապանից) իրենց լուսանկարներն էին ներկայացրել: Ինչպես նախորդ, այնպես էլ այս մրցույթի ժամանակ հեղինակավոր ժյուրիի առաջ դրվեց բավական բարդ խնդիր. նրանք պետք է ընտրեին այն երջանիկ գեղեցկուհուն, որն արժանի լիներ «Միսս Գեղեցկություն» հեղինակավոր տիտղոսի:

Ապրիլի 6-ին, մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ, «Նարեկացի» արվեստի միության դահլիճում տեղի ունեցավ հաշմանդամ կանանց գեղեցկության 2-րդ հանրապետական ֆոտոմրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը:

Սահմանված էր 4 նոմինացիա՝ Գրան-պրի՝ Միսս Գեղեցկություն - 2005

1-ին մրցանակ՝ Վիցե-Միսս Գեղեցկություն  
2-րդ մրցանակ՝ Միսս Հմայք



Մրցույթի մրցանակակիրները

3-րդ մրցանակ՝ Միսս Ժպիտ:

«Ունիտոն» ՀԿ-ն նաև սահմանեց 6 խրախուսական մրցանակ: Ժյուրիի կազմում ընդգրկվեցին Հայաստանի մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչներ՝ Հանրային հեռուստառադիոընկերության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր Երվանդ Երզնկյանը (Ժյուրիի նախագահ), հանրահայտ երգիչ Ֆորշը և Հայաստանի առաջատար լուսանկարիչներից մեկը, «Պատկեր» ֆոտոգործակալության տնօրեն Ռուբեն Մանգասարյանը: Դժվար չէ կռահել, թե ինչու է գեղեցկուհուն ընտրելու դժվարին



### Արուսյակ Ղևոնդյան

### ՀԱՅՈՒԿԻ

Արտաքինը՝ հմայիչ, Անունը՝ հրապուրիչ, Հոգիդ՝ մաքուր ու անբիծ Եվ ժպիտդ՝ գրավիչ: Կյանքում բարին ցանկացող, Բոլորին լավ կամեցող՝ Դու մի չքնաղ հայուհի:

### ՀԱԿՍ

Մոխրի միջից դու հառնեցիր Ու ապրեցիր լույսերի մեջ, Ինձ քո փայլով հուսադրեցիր, Ճամփա դարձար այս կյանքի մեջ: Թևիդ այդպես խենթ ու հպարտ Ու հույս փռիր քո թևերով, Թող դեմքերին լուռ, հուսահատ ժպիտ փայլի քո երգերով:



հանձնարարությունն ընձեռնվել արվեստագետներին՝ ո՞վ կարող է նրանցից լավ կողմնորոշվել գեղեցիկը զնահատելու հարցում:

- Մրցանակները տրամադրել էին՝
- «Ջիզզազ» ընկերությունը (երաժշտական կենտրոն գլխավոր մրցանակակրի համար)
- «Նոյյան Տապան» գրախանութը (մրցանակներ 4 հաղթողների համար)
- «Swatch» ֆիրման (ժամացույց առաջին մրցանակակրի համար)
- «Բրաբիոն Ֆլորա Սերվիս»-ը (ծաղկեփնջեր 10 հաղթողների համար)
- «Club»-ը (վարսահարդարիչ 2-րդ մրցանակակրի համար)



Միսս Գեղեցկություն՝  
Սվետլանա Գրիգորյանը

- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը: Մրցույթի անկցացմանը սիրով աջակցություն ցուցաբերեց անվանի լուսանկարիչ Գերման Ավագյանը իր յուրօրինակ լուսանկարներով: «Ունիտոն» ՀԿ-ն հատուկ շնորհակալություն է հայտնում «Նարեկացի» արվեստի միության տնօրինությանը՝ դահլիճը տրամադրելու համար: Մրցույթի թագուհի ճանաչվեց 17-ամյա Սվետլանա Գրիգորյանը Երևանից, որը մեծագույն հրճվանքով և հաղթանակի՝ հոգին պարուրող զգացումից փայլող անբասիր աչքերով ընդունեց պատվավոր թագը նախորդ տարվա մրցույթի հաղթող՝ Շուշանիկ Նահապետյանի ձեռքից: 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակները

ստացան համապատասխանաբար.

- Գոհար Ստեփանյանը՝ Վիցե-Միսս Գեղեցկություն - 2005 (Երևան, 24 տարեկան)
- Ռուզաննա Մարտիրոսյանը՝ Միսս Հմայք (Երևան, 17 տարեկան)
- Անահիտ Խաչատրյանը՝ Միսս



Ս.Գրիգորյանը Վիցե-Միսս՝ Գոհար Ստեփանյանի հետ ժայիտ (Աբովյան, 24 տարեկան):

Հատկանշական է, որ կանանց գեղեցկությունը փառաբանող միջոցառումը անցկացվեց արվեստի միության բեմում, այն էլ՝ հաշմանդամ արվեստագետների ստեղծագործությունների մրցույթի մրցանակաբաշխության հետ զուգակցված: Այո, գեղեցկուհիների ֆոտոմրցույթին համընթաց «Ունիտոն» ՀԿ-ն իրականացրեց նաև արվեստի գործերի մրցույթ: Սահմանված էր 3 անվանակարգ՝ ըստ արվեստի ճյուղերի՝ Գորելեն և ասեղնագործություն, Գեղանկարչություն, Փորագրություն և խեցեգործություն:



Մրցանակաբաշխության հանդիսավոր պահը

Մրցույթն ընդգրկեց ավելի քան 70 աշխատանք: Դրանցից 12-ը արժանացան մրցանակների՝ մեկական Գրան-պրի («Նարեկացի» արվեստի միության կողմից տրամադրած DVD-փլեյերներ) և երեքական խրախուսական մրցանակ «Ունիտոնից» յուրաքանչյուր անվանակարգում: Հատկանշական է նաև, որ հաղթողներից շատերը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ էին: Սա, թերևս, մեկ անգամ էլ անտեսանելի, բայց և անքակտելի կապով միախուսում

## ՋԵՄ ԲՈՒԼԻՆԳ

Շվեդիայի Հաշմանդամության ինստիտուտի դոկտորանտ, ՇԻԱ՝ Շվեդիայի հաշմանդամային կազմակերպությունների ասոցիացիայի տեղեկատվական բաժնի պատասխանատու, Ստոկհոլմի Կանաչների կուսակցության նախագահ

### ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ




Ջ.Բուլլինգը դուստրերի հետ

Ես ուզում էի ամուսնանալ և ամուսնացա: Ես ուզում էի երեխաներ ունենալ և այսօր ունեմ երկու չքնաղ լեդի: Ես ուզում էի տեսնել աշխարհը, և եղա Եվրոպայում, Արևելյան Եվրոպայում, Ասիայում, Կարիբյան կղզիներում, Աֆրիկայում: Ֆրանսիան, իմ առաջին սերը բերեց ինձ Փարիզ՝ բարձրանալու Էյֆելյան աշտարակ: Ես տեղափոխվեցի Փարիզ 1974թ., Շվեյցարիա՝ 1975-ին, Կոպենհագեն՝ 1979-ին և Շվեդիա՝ 1991-ին:

Կյանքն անհոգ էր՝ լի արկածներով, տարբեր մարդկանց հետ հանդիպումներով, տնով, լավ աշխատանքով, շնով և նավարկելու թույլտվությամբ: Ստոկհոլմը դարձավ իմ տունը 1991թ. հունվարին: Ես զբոսնում էի նրա գեղեցիկ փողոցներով, բարձրանում էի հին քաղաք և մագլցում ծովափնյա ժայռերը:

1991թ. սեպտեմբերի 4-ին մի ձի որոշեց, որ ես իր դուրը չեմ գալիս: Նա գցեց ինձ իր վրայից: Այդ պահին օդով թռչելիս ես աղոթում էի. «Աստ-

ված իմ, ինձ ուժ տուր»: Ես զգում էի, որ վայրէջքը ծանր է լինելու: Հարվածը վնասեց իմ մեջքը: Ես ահավոր ցավ էի զգում: Չէի զգում ոտքերս: Բժիշկն ասաց. «Դուք ճիշտ եք, դուք կտորել եք Ձեր մեջքը»: «Ի՞նչ է դա նշանակում», - հարցրեցի ես: «Դուք այլևս երբեք չեք քայլելու»: Կյանքն այլևս անհոգ չէր: Ինձ սկսեցին



Ողնաշարի վնասվածքը խոչընդոտ չէ ձկնորսությանը զբաղվելու համար...

վերաբերվել և խնամել այնպես, որ ես ստիպված եղա համակերպվել իմ ողբալի վիճակի հետ: Շատերն ինձ խղճում էին: Ամուսնուս ընկերն ասում էր, որ եթե ինքն իմ տեղը լինեք, ինքնասպանություն կգործեր:

Իմ ամուսինը չցանկացավ ինձ հետ մնալ: Նա այլևս իմ մեջ կին չէր տեսնում: Իմ ավագ դուստրը ինը տարեկան էր, երբ դեպքը տեղի ունեցավ: Նա ինձ մեղադրում էր ծուլության մեջ, ասելով. «Դու չես կարող հենց այնպես պառկել այդտեղ, հիվանդանոցից արի տուն և հոգ տար մեր մասին, մայրիկ»: Իմ կրտսեր աղջիկը համարում էր, որ ես միայն 50%-ով եմ մայրիկ, եթե ես նույնիսկ քայլել չեմ կարողանում:

Ինքնասպանության մասին մտքերը լցնում էին իմ գիտակցությունը: Ես ինձ բռն էի զգում, լաց էի լինում և ճչում: Ինքս ինձ հարց էի տալիս. «Եթե ինչ՞ու՞ է Աստված լքել ինձ: Պատասխանը իմ հավատն էր. «Սակայն գիտենք, թե ամեն բաները բարիին գործակից կ'ըլլան անոնց, որ Աստուած կը սիրեն» (Հոովմայեցիս 8:28), «Ամեն բանի մեջ գոհություն տուեք Աստծուն» (Թեսաղոնիկեցիս 5:18): Այսինքն, Աստծուն պետք է շնորհակալ լինել միշտ, այլ ոչ թե միայն այն դեպքում, երբ կյանքն անհոգ է: Շնորհակալ պետք է լինել նույնիսկ, երբ դու տեղաշարժվելու դժվարություններ ունես: Ես ահավոր ցավեր և սպաստիկա էի ունենում: Յոգան և շնչառական վարժությունները շատ օգտակար եղան: Այժմ ես քնում եմ առանց ցավազրկող դեղերի: Թախիծը և լարվածությունը


աստիճանաբար նվազում են:

Ես բախտավոր էի՝ Շվեդիայում մեջքս վնասելով: Ես ստացա լավ բժշկական խնամք և վերականգնողական բուժում, անձնական օգնություն, ավտոմեքենայի դրամաշնորհ, տեխնիկական սարքավորումներ, որոնք թույլ տվեցին ինձ ապրել լիարժեք կյանքով:

Հիշեցի իմ նպատակների մասին: Ես ուզում էի համալսարանական աստիճան ստանալ: Վերադարձա քոլեջ, ստացա սոցիալական անթրոպոլոգիայի մագիստրոսի կոչում և հիմա հաշմանդամության մասին ուսումնասիրությունների թեմայով պատրաստում եմ դոկտորական ատենախոսություն: Ես ընդգրկվեցի հաշմանդամության շարժման մեջ և մի քանի կազմակերպություններում հանդես եմ գալիս որպես այդ շարժման ներկայացուցիչ: ՄԱԿ-ի Ասոցիացիան ու Ֆուրուբոդայի Ժողովրդական դպրոցը միայն երկուսն են այդ կազմակերպություններից: Ես հաշմանդամություն ունեցող մարդկանց համար նախագծեր եմ իրականացնում և աշխատում եմ միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ:

Որոշեցի պարզել, թե ինչ կարելի է անել քաղաքականության միջոցով և մի քանի տարի առաջ ընդգրկվեցի Կանաչների կուսակցության մեջ: Այսօր ես Ստոկհոլմ քաղաքի Կանաչների կուսակցության նախագահն եմ: Մատչելիությունը մի խնդիր է, որը շատ ջանք ու աշխատանք է պահանջում:

Աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպեցի Ավերկերին: Անցած տարի մենք ամուսնացանք: Նա ասում է, որ ես գեղեցիկ եմ և հպարտանում է այն ամենով, ինչ ես անում եմ: Անվասայլակը ուղղակի մի գործնական մանրուք է: Մատչելիության պետք է ուղղակի հասնել: Ձկնորսությունը, դահուկասահքը, չմշկասահքը մեր



Երջանիկ գույզը հանդիսավոր արարողության ժամանակ

ընդհանուր զբաղմունքների միայն մի մասն են:

Իմ հավատն ու կյանքի նկատմամբ սերը, ժողովրդավարության և հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքին լիարժեք մասնակցության իրավունքի նկատմամբ իմ վստահության հետ միասին թույլ տվեցին ինձ հիանալի կյանք ապրել: Գոհ եմ, շատ ավելի երջանիկ եմ այսօր, քան այն ժամանակ, երբ կարողանում էի վազվզել փողոցներով: Չնայած ես շատ եմ կարոտել այդ վազվզոցին: Այսօր արդեն գիտեմ իմ հետ պատահած այդ դեպքը ողբերգություն չէ: Դա ուղղակի հնարավորություն էր ընդունելու կյանքը այլ տեսանկյունից, զնահատելու այդ կյանքը մեկ այլ հեռանկարում: Ես նոր կյանք եմ ապրում, որը երբեմն լի է դժվարություններով, սակայն հարուստ է շատ այլ առումներով:

## Այս համարը պատրաստեցին.

Դավիթ Բաբայանը  
Գոհար Ստեփանյանը  
Լուսինե Մելքոնյանը  
Գայանե Փայտյանը

Լուսանկարները՝  
Գերման Ավագյանի

Խմբագիր՝  
Արմեն Ալավերդյան

Կոնտակտ  
տեղեկություններ.

Հասցե՝

Երևան 375033

Հակոբյան 10/56

Հեռ.՝ 52-21-70

Ֆաքս՝ 22-64-70

Վեբ-կայք՝ [www.unison.am](http://www.unison.am)

Էլ. փոստ՝ [unison@unison.am](mailto:unison@unison.am)

Պարբերականը  
տպագրվում է  
Շտրաուս - Քուլիանջյան  
ընտանիքի (ԱՄՆ)  
աջակցությամբ

# INVISIBLE PEOPLE

Periodical of Unison NGO

August 2005

Special issue devoted to the rights of women with disabilities

*“The full and complete development of a country, the welfare of the world and the cause of peace require the maximum participation of women on equal terms with men in all fields”*

*(excerpt from the Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women - CEDAW)  
Armenia ratified the CEDAW in 1993.*

## Exclusive

**INTERVIEW WITH  
LARISA ALAVERDYAN,  
HUMAN RIGHTS DEFENDER  
(OMBUDSMAN) OF ARMENIA  
by Lusine Melkumyan (page 2)**

***Invisible People: How would you evaluate the role of women in modern Armenia?***

**Larisa Alaverdyan:** I think there is a contradiction between the women’s educational skills, public activity, traditional role in the Armenian family and their real position in the community. This asymmetry may turn into another so called “Armenian paradox”. In my view, there is no paradox here. Actually, people do not understand or ignore some crucial problems. In other words, the role of the woman in our society does not correspond to her real potential.

***IP: If a woman with disability strives to take a decent position in the community, she needs to get proper education or training to get employed. How can all of this be implemented in our country?***

**LA:** In advanced countries the issues of employment of people with disabilities are regulated by law. Economical measures, including tax deductibility mechanisms encourage the employers to have disabled employees among their staff. State authorities of Armenia do not often deal with these issues, reasoning that most of the functioning firms and companies are

privately owned. However, we are not the first nation in the world (in fact, we are among the last ones) to adopt private property. Hence we should elaborate on the legislative acts which will provide tax privileges for the employers who get the disabled employed and simultaneously the punishing measures for those who avoid to do so.

***IP: Do you think it is possible that a disabled woman may ever take one of the highest state offices in Armenia?***

**LA:** I believe it is possible. I must believe in it both because I am the Human Rights Defender of Armenia and because I have my own approach to this problem. For me, it is quite unacceptable when a person’s ability to perform a certain kind of work is evaluated by the criteria which do not have anything in common with the specific requirements for this particular job (for example, by physical limitations).

***IP: Who is, according to you, in a more vulnerable position – a disabled man or a disabled woman?***

**LA:** It is an interesting question, I have never thought of that before. In the Armenian reality, a man is always thought of as the head of the family, the main person to take care of financial and other crucial issues. From this respect, a disabled man’s vulnerability has a more psychological origin, as far as he loses his competitiveness on the labor market and therefore the ability to get employed. Actually, a woman with disability is more vulnerable, since she does not have equal opportunities in our society. However, there is a positive shift in this regard. When I saw Miss Beauty 2005, the winner of the Beauty Photo Contest for Women with Disabilities, I was greatly impressed – I had never seen such a beautiful lady even among the winners of regular beauty



**Human Rights Defender of Armenia  
Larisa Alaverdyan with  
Miss Beauty 2005 Svetlana Grigoryan**

contests...

**MISS BEAUTY 2005  
by David Babayan (page 4)**

Many great thinkers and poets compared the woman’s beauty with the most wonderful things in the world. Following this idea, Unison NGO conducted the Second National Beauty Photo Contest for women with disabilities. 40 women and girls from Yerevan, Abovyan, Spitak, Martuni and other regions submitted their photos to the jury, which included distinguished figures of culture and art (Yervand Yezinkyan, composer and Artistic Director of the Variety-Symphonic Orchestra of the Armenian Television and Radio – Chairman of the Jury, the renowned singer Forsh and Ruben Mangasaryan, one of the leading photographers of Armenia).

The prizes were provided by:

- Zigzag Electronics (an audio system for the winner)
- Noyan Tapan bookstore (prizes for 4 winners)
- Swatch (a watch for the 1<sup>st</sup> prize holder)
- Brabion Flora Service (flower buckets



for 10 winners)

- Club (a hairdryer for the 2<sup>nd</sup> prize holder)
- Human Rights Defender of Armenia Larisa Alaverdyan
- Unison NGO.

The organizers express their gratitude to the distinguished photographer German Avagyan for his invaluable contribution. They are also grateful to the Naregatsi Art Institute for the hall provided for the prize-giving ceremony.

Svetlana Grigoryan (17, Yerevan) was announced the queen of the contest. The winner of last year's beauty contest Shushanik Nahapetyan crowned Svetlana as Miss Beauty 2005.

The other winners are Gohar Stepanyan (Vice Miss, 24, Yerevan), Ruzanna Martirosyan (Miss Charm, 17, Yerevan) and Anahit Khachatryan (Miss Smile, 24, Abovyan).

It is worth mentioning that simultaneously with the beauty contest, Unison held the First National Contest of Art Works by people with disabilities.

The 3 top winners received DVD players provided by Naregatsi Art Institute.

### **SUCCESS STORY** by Jamie Bolling (page 5)

**Social anthropologist following a PhD program at the Swedish Institute for Disability Research, information officer for SHIA - The Swedish Disability Organisations' Aid Association, President of the Green Party for the City of Stockholm, Sweden**

Married I wanted to be, and I married. Children I wanted to bare, two girls who today are beautiful ladies have I. The world I wanted to see – Europe, Eastern Europe, Asia, the Caribbean's and Africa are places I have been. French, my first love brought me to Paris to climb the Eiffel Tower. Moved to Paris 1974, to Switzerland 1975, to Copenhagen 1979 and then to Sweden 1991.

Life was carefree, filled with adventure, meeting of people, house, good job, two kids, dog and a boat license. Stockholm

became my home January 1991. I ran her beautiful streets, climbed through the old town and hopped on her beaches' rocks. 4<sup>th</sup> of September 1991, a horse decided he did not like me. Threw me from his back. Flying through the air I prayed, "God give me strength." Felt the fall would be a hard one. Crack said my back. I was in dire pain. Couldn't feel my legs. The doctor said, "You're right. You did break your back." "What does that mean?" I asked. "You'll never walk again."

Life was no longer carefree. Was met by attitudes and treatment that mirrored my acquired condition as a state of tragedy. Most everyone pitied me. A friend of my husband said that if he had been in my place he would kill himself.

My husband didn't want to stay in our marriage. He could no longer see me as a woman. My eldest daughter was nine when the accident happened. She thought me to be lazy – You cannot just lie there, come home from the hospital and take care of us Mama. My youngest said I was a just 50% Mom, I couldn't even walk. Thoughts of suicide crossed my mind.



**Skiing...**

I felt myself a burden. I cried and screamed. Asked God why he had abandoned me. The answer was my faith. "All things work together for those who love God" Romans 8:28. "For all things give thanks" I Thessalonians 5:18. To always be thankful, not only when life was carefree. Thankful even when my body had difficulties. I was in pain, was very spastic. Yoga exercise and breathing became very helpful. I sleep without painkillers. Sorrow stills. Stress releases.

I was lucky to have broken my back in Sweden. I received good medical care, good rehabilitation, personal assistance, car grant, technical aids, all allowing me

to live a life of full participation.

I remembered my goals. Wanted a university degree. Went back to school and earned my masters in Social Anthropology and now follow a doctorate program in Disability Studies. Became engaged in the disability movement. Represent the movement in several organizations. The UN Association and Furuboda Folk High-school are two of the posts I have today. I work with international development



**Romantic couple**

cooperation, with projects for people with disabilities.

Decided to see if I could make more of a difference through politics. Became active in the green party a few years back. I am today President for the City of Stockholm. Accessibility is an issue needing much work.

I met Sverker through my work. We married last year. He tells me I am beautiful and that he is proud of all I do. The wheelchair is a practical detail. Accessibility is to be solved. Fishing, ice skating, skiing are some of the activities we share.

My faith and love for life, along with my belief in democracy and the full participation of all members of society have allowed me to live a good life. I am satisfied, I am more happy today than when I could jog the streets. Though I miss jogging. Today I know my accident was no tragedy. It was an opportunity to adopt another view of life, to appreciate life from another perspective. I have a new life style that is complicated at times, but richer in many ways.

---

**This periodical is published with support of the Strauch Kulhanjian Family (U.S.)**

**This issue was prepared by:**

David Babayan  
Gohar Stepanyan  
Lusine Melkumyan  
Gayane Paytyan  
Photos by German Avagyan

**Contact Information:**

Address: Hakobyan St. 10/56,  
Yerevan 375033, Armenia  
Tel.: (+37410) 522170, (+37491) 403518 - mobile  
Fax: (+37410) 226470  
www.unison.am